Ծանոթություն.— *Ուսումնասիրողներից մի քանիսը* (Brosset, Deux historiens arméniens, Petersbourg, *1870, ծ. 51, ծանոթություն։ Մովսեսյան, Լոռիի Կյուրիկյան թագավորներու պատմությունը, Վիեննա, 1923, էջ 32, Լ. Մելիքսեթ-բեկ, վրաց աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, հտ.* I, *էջ 212) ենթադրում են, որ այդ բարձրաքանդակները Սմբատ Տիեզերակալինը և նրա եղբայր՝ Կյուրիկե (Գուրգեն) առաջինինը չեն, այլ Դավիթ Անհողինի որդի Կյուրիկեինը և վերջինիս հորեղբայր Սմբատինը, որ ապրել են 11-րդ դարում։*

Այդ ենթադրությունը զուրկ է որևէ հիմքից, որովհետև բարձրաքանդակները ներկայացնում են եկեղեցին շինողները, որոնք տաճարի կաղապարը ձեռներին ի տես են կանգնել արևելյան պատի բարձրադիր մասում, իսկ ինչպես հայտնի է, Սանահնի Ամենափրկիչ եկեղեցին շինված է ոչ թե 11-րդ դարում, այլ 10-րդ դարում Սմբատ Տիեզերակալի և Գուրգենի (Կյուրիկե 1-ինի) ժամանակ։

Այս մասին տես սույն աշխատության առաջին մասը։

4. Ամենափրկչի ամ պատին դրսից բարձր, իր կողմի վրա, այժմ փոքր գավթի մեջ

Ժ—ԺԱ դար

Հրատարակվում է առաջին անգամ

1 *Ի ժամանակս . . .*
2 *որ իւր թվական . . .*
3 *մասանց հաւոց գ . . . [եկ-]*
4 *եղեցիքս Հաղբատա . . .*
5 *եւ բարէպաշն ամիրապետ . . .*
6 *ք էպխկա[պոս] . . .*

Ծանոթություն.— *Արձանագրության առաջին հինգ տողերի շարունակությունը մնացել է ժամատան որմնակամարի տակ։*

5. Ամենափրկչի աե պատին դրսից, լուսամուտի գլխին

(Լուս. № 24)

Հ ՈԱ Մ 1152

Հրատարակվում է առաջին անգամ

1 *Շնորհիւն Այ եւ կամակցութբ ե[ղբար]-*
2 *ցս աւաք գրք Սարգսին աւենն Սարգսի Շար-*
3 *ենկանն որդոյն։ Զաղաւթս եւ զպատարագս*
4 *անխափան, մինչ ի գալուստն Քի . . .*
5 *յԱյ։ Զունի ոք հրաման խափանելու։*
6 *Թւ. ՈԱ։*